Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության (8 դասաժամ) և ինֆորմատիկայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի թափուր պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (թեստ) և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ (Ձեւ 1),
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 1),
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մայիսի 24-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:30-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

«Պատմություն» առարկայի մրցույթը տեղի կունենա **հունիսի 9-ին՝ ժամը 12:00-ին**,իսկ «Ինֆորմատիկա» առարկայի մրցույթը՝ **ժամը 15:00-ին**:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնք գ. Պեմզաշեն <<Պեմզաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ 1 փողոց 2 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 – 93 – 34 - 05 հեռախոսահամարով: